ընդունի և ոչ 'ի վերայ իւր յանձն առնուլ կարէ, զամենայն զոր ինչ որ իցէ ընդ դէմ իւրոյ և յինքն ոչ կարէ մնալ 'ի մի ժամ և կամ ոչ 'ի մի աւուր միով բնութեամբ անփոփոխ, ուրեմն ոչ գտանի այլ իմն ճար և հնար փրկել սմայ 'ի փոփոխմանէ և 'ի զանազան փորձութենէ և երջանիկ և արժանի պատուոյ սմայ առնել, բայց 'ի զօրութենէ բանական հոգոյ մերոյ ընտրողութենէ անխախտելի սահմանօք բարեգոյն յօրէնս ըստ համեմատութեան բնական բնութեան, և զօրութեան բանական հոգոյ մերոյ, որպէս 'ի վեր բազմիցս ասացաք, զի նա կամաւ ընդունեսցէ և ընդունելութեամբն նա կալով մնասցէ հաստատուն, և սովաւ բառցցէ զնասն փոփոխականութեան բնութեան մերոյ, և արասցէ մեզ արժանի մարդ 'ի պատուոյ, և հոչակեսցի արդարութիւն 'ի մէնջ, և որպէս բնութիւնս մարդոյ միշտ ազատապէս ներգործէ զամենայն զոր ինչ, որ 'ի սրտէ իւրմէ գոյանայ և ըստ սովորութեան փոփոխական կամաց իւրոյ երբեմն ցանկանալով, երբեմն ընթանալով, և երբեմն կատար հասուցանելով, և մասն մի 'ի նոյն փոփոխական կամաց այս է, որ ոչ ոք ծնունդ 'ի բնութենէ մարդոյ ոչ զերծանի, հաւատալոյ իբրև զինքն այր առաջին, և կարևոր, իմաստուն, հարուստ, զօրեղ, գիտուն և ամենայն արհեստիւք լիքն և ոչինչ պակասութիւն ընդ իւր խորհի, այս մասն բնութիւն, ծնանի 'ի մէնջ 'ի ժամ ծննդեան 'ի